

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մարդկութիւնը ներկայումս ականադես է մի համաժողովի, որին նպատակ է դրած ուսումնասիրել պատերազմի խնդիրը իւր այն հանգամանքներով, որոնք աւերիչ ներգործութիւն ունին մարդկային հասարակութեան բարոյականի և տնտեսականի նկատմամբ։ Որ Հաագի կոնգրէսին ընդհանրութիւնը մեծ հաւաքով չի վերաբերում—այդ դուրս է ամեն կասկածից. ամենալաւատեսներն անգամ իրենց յոյսերը չեն կապում որ և է անմիջական դրական մեծ արդիւնքի հետ. բայց այնուամենայնիւ նոքա կարծում են, որ խաղաղութեան կոնգրէսը մի տարւայ գումարումով չի վերջանալ, այլ տեղիք կտայ պարբերական գումարումների, ուր կարելի կ'լինի որ և է բարերար արդիւնքների հանգչել։

Մեզ այնպէս է թւում, թէ խաղաղութեան համաժողովը, եթէ սկզբից փանւի հմրութեամբ և իմաստութեամբ, կարող է ժամանակով կերպարանափոխել մի տեսակ համաշխարհային քաղաքական արեօպագի, որը եթէ չկատարէ անգամ պաշտօնական ընդհանուր դատաւորի դեր՝ գէթ կ'լինի հանրամարդկային քաղաքական խղճի արտայայտիչ. և այդ չի կարող իւր մեծ նշանակութիւնը չունենալ պետութիւնների թէ միջազգային և թէ նոյն իսկ ներքին քաղաքական ու հասարակական կեանքի վրայ, այն պատճառով, որ մի այդպիսի համաժողովի մէջ ամեն մէկի ձայնի բարձրութիւնը կամայ ականայ կ'ձգտի համակերպել ոչ միայն իւր ունեցած սրբի թիւին, այլ և ներքին կառավարութեան բարեկարգութեանը։ Հակադարձ զգեցումութիւնը անխուսափելի պիտի լինի. ամեն մի մասնակից պետութիւնն պիտի ջանայ նոր համաժողովին ներկայանալ կու-

սուրահան ասպարէզի վրայ տարած նոր յաղթանակով, այսպէս ասած՝ սլարզերես, լաւ զգալով որ միջազգային ազդեցութիւնը կարելի է ապահովել միմիայն ներքին մեծ խնդիրների հասարակաշահ տնօրինութիւնով—համաձայն բարօրութեան զրաւականներ պարունակող ծրագիրներին:

Կայ մի կարեւոր հանգամանք, որը պիտի դառնայ աշխարհումների պարբերականութեան առաջարկին ոչ թէ տալով. այդ այն է, որ թէև առաջիկայ կոնգրէսի նախաձեռնութիւնը պայտանում է մի հզօր պետութեան, բայց պատերազմների արհաւիրքները արդէն վաղուց կեանքի են կոչել Արևմտեան Եւրոպայում խաղաղութեան միջազգային ընկերութիւններ, որոնք և պարբերաբար ունենում են իրենց համաժողովները: Եւ եթէ այդ իրողութիւնը ցոյց է տալիս դիտնական աշխարհի մի մասի մէջ եղած փրամադրութիւնը, նորա հաւատն ու յօսքը, միւս կողմից մի Սփէշի փորձերը խաղաղութեան խաչակրաց արշաւանքն առաջ բերելով՝ որոշում է ժողովուրդների աւելի լայն խաւերի, որոնց մէջ և կանանց սեռի՝ ստատելիքը Հակապատերազմական դրութեան համար կան ուրեմն սերմեր որ արժասիր են զգած ազգերի դիտակցութեան մէջ, միշտ, իհարկ է, մինչ մի յայտնի աստիճան:

Բայց ահա մի կարեւոր հանգամանք. չնայած պատերազմների շէմ վարած պրոպագանդային, վերջինս բնաւ չի կարողացել մի այնպիսի արմատ գցել ժողովուրդների մէջ, որ անգէն կացութիւնը շառած լինի շաւանանք ոչ միայն որ և է պետութեան, այլ և որ և է կառավարութեան, և նոյն իսկ որ և է քաղաքական կուսակցութեան: Դորա հակառակ՝ իսաղաղասիրութիւնը, խաղաղութիւն պահպանելու քաղաքականութիւնը նոյն իսկ սովորական կէտն է ամեն մի կառավարչական յայտարարութեան, արտաքին քաղաքականութեան վերաբերեալ: Բայց պատերազմը վարում է զօրքով, նախապատրաստած զօրքով: Բայց իւր զինաւորումը ոչ միայն չի ծածկում ոչ մի պետութիւն, այլ և լաւագոյն կերպով զինւած լինելը պարծանք է կազմում ամեն մի կառավարութեան, որ ասել է թէ այդ նոյն զգացմունքին են նաև ազգերը ընդհանրապէս, որովհետև, վերջ ի վերջոյ, առանց լուրեւայն և կամ բարձր արտայայտուող համաձայնութեան ազգերի՝ նոցա կառավարութիւնները չեն

կարող զինաւորւած կազուեթիւնը փեռապէս պահպանել: Եւ ոչ մի սլարլամէնտ սահմանադրական երկիրներում այնքան քիչ չէ վիճում որ և է լուրջ առարկայի, որքան զինաւորման մասին, չնայած որ պետական ծախքերի մի ամենակարեւոր յօդածը այդ գործին է յատկացւում: Եւ շեռ աւելին. կառավարութիւններ ու պարլամէնտներ յաճախ իրար հետ մրցում են ցոյց տալու զինաւորման մէջ նկատուած պակասութիւնները՝ նոր ծախքեր պահանջելով որ դոբա լրացւին: Եւ երբէք լուրջ ու համոզիչ դիտողութիւնները այդ մասին առանց յաջող հերեւանքի չեն անցնում:

Եւ ստացւում է մի անպարտի դեթ ըստ երեւութին հակասական դրութիւն. զօրքը պատերազմի համար է. այդ պարճառով պէտք է զօրքը լինի ամենակարարեալ ու ամենաուժեղ՝ թուով ու չարկութեամբ. պէտք է ամեն ընդունելի կազմ ու պատրաստութեամբ պէտք չէ պատերազմասէր լինել. պէտք է ամեն խաղաղ միջոցներ գործ դնել՝ պատերազմի գէմն առնելու համար: Այդպիսով ստացւում է այս դրութիւնը՝ լաւագոյն զօրքով — խաղաղ կազութիւն:

Ահա այն դաւանանքը որ մշակել է մեծ ազգերի քաղաքական կեանքը ներկայ դարում: Բայց այս չէ բոլորը: Զօրքը, պատերազմի դէպքի համար լինելով հանդերձ, միևնոյն ժամանակը ծառայում է որպէս արգելք պատերազմի: Պատերազմը լոկ սրտերազմի համար չի վարւում, այլ յաջողութեան համար ինչպստ որ և է արդար կամ յաւակնոտ պահանջի: Պատերազմը յայտարարում է և կամ գործը մինչև պատերազմն է հասցնում նա, ով յոյս ունի թէ յաղթութիւններ ինքը պիտի շահի: Բայց յաղթութեան հաւաստիութիւնը մեծ է կամ նւազ՝ նայած ուրի ազգերի զինւորական պատրաստութեան: Հետեապէս որքան ուժեղ է դրացին՝ այնքան մի պետութիւն ստիպւած է զսպել իրեն և պատերազմի տեղիք չտալ և մանաւանդ նախադարձակ չլինել:

Սա՛ ոչով ու ժով չեզոքացնելու տեսութիւնն է՝ իբրև միջոց խաղաղութիւնը, այսինքն՝ ունեցածը իւր ձեռքում պահելու:

Այս վերջին տեսութիւնը մանաւանդ այժ պտացաւ 1870 — 11-ի ֆրանսագերմանական պատերազմից դէտ, որ ժամանակիս մինչ վերջին ծայր հասցրած զինւորական պատրաստութիւնը դարձաւ

անվիճելի դրութիւն և պայման ամեն քաղաքական յաջողութեան՝ թէ պատերազմի և թէ խաղաղութեան ժամանակ։

Այն հանգամանքը որ 1871-ից շէս Արեւմտեան Եւրոպայում պատերազմական ընդհարում տեղի չի ունեցել՝ մեծապէս նպաստեց ծայրայեղ զինւորական պարաստութիւններին՝ իբրեւ գրաւական խաղաղութեան պահպանման, որով և խաղաղասէրների կոնգրէսները գրեթէ առանց արձագանքի էին անցնում։

Ապահովութեան, այլ նաեւ առանց պատերազմի յաջողութիւններ ձեռք բերելու հոգսը շրջեց եւրոպական ազգերին շէպի զինակալցութիւններ. Գերմանիայի զինակալցութիւնը Աւստրո-Ունգարիայի, և ապա այդ երկուսինը՝ Իտալիայի հետ՝ առաջ բերեց Ֆրանս-ռուսական զինակալցութիւնը, որը, իւր հերթին, շրջում է Անգլիային՝ շէպի զինակալցութիւն չիւսիսային Ամերիկայի հետ։ Անհրաժեշտութիւնից շրջւած այդ զինակալցութիւնները մի նոր ոյժ տւին զինաւորման գործին այն պարագայով, որ թոյլ զինւածի հետ ուժեղ զինւածը չի կամենալ զինակալցութիւն հաստատել. ուրեմն աւելի թոյլ զինաւորում ունեցող պետութիւնը պարտաւորութիւն պիտի յանձն առնէր իւր շաշնակցի պահանջներին համակիրուել և զինաւորումը ուժեղացնել ու կարարեւազործել։ Այս հարկի մէջ գտնուեց Աւստրո-Ունգարիան բայց մանաւանդ Իտալիան՝ Գերմանիայի վերաբերմամբ։

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, որ բացի այն որ ամեն պետութիւն ձգտում է իւր զինւորական ոյժը բարձրացնելու, այլ և ամեն պետութիւն ինքը չէ միակ որոշիչը իւր զինւորական ոյժի, այլ գտնւում է հսկողութեան ներքոյ այն իրենից աւելի զօրաւոր պետութեան, որի հետ նա զինակալցութեան գրաւոր խոստումով կապւած է։ Դաշնակիցը կարող է իւր կամքով բարձրացնել իւր զինւորական ոյժը, բայց նա սլարտաւորւած է նախարեսնւածից պակաս չունենալ։

Ահա այն գործօնները որոնք սրեղծել են ժամանակակից զօրքերը. դա է, որ կազմում է և կոչւում զինւած խաղաղութիւնը։

Այդ սիստէմով Եւրոպան ներկայումս բաժանւած է երեք մեծ

բանականների, որոնք են՝ գերմանական-աւստրո-ունգարական-իտալական նիզակակից բանակը, ռուս-ֆրանսիական զինակից բանակը, և Անգլիան, որը հակակշիռ է որոնում Հիւսիսային Ամերիկայի նիզակակցութեան մէջ։ Դոցանից շուրս՝ պահպանում են իրենց դոյութիւնը մանր պետութիւնները՝ Իսպանիա, Հոլլանդիա, Բելգիա, Զւիցերիա, Դանեմարք, Շւեդ-Նորւեգիա, Յունաստան, Ռումինիա, Սերբիա, Բուլղարիա, Չերնոգորիա։ Դոցա անկախութիւնը ապահովւում է մասամբ կուլտուրական յառաջդիմութեամբ սպեշժած յարգանքով, մասամբ մեծ պետութիւնների փոխադարձ հակառակութիւնով։ Բայց և շոքա, անկարող մեծ պետութիւններից մէկն ու մէկին ընդդիմադրել, զինաւորման մէջ հետեւել են մեծերի տւած օրինակին—միշտ ջանալով կադարելութեան հասցնել իրենց զինաւորումը։ Թիւրքիան կանգնած է մեկուսի. նորա քաղաքական անկախութիւնը և պետութեան ամբողջութիւնը ապահովւած չէ ոչ այն գրաւականով որը տալիս է կուլտուրական յառաջդիմութիւնը և ոչ էլ որ և է հաստատուն, անկեղծ և յարաբեր բարեկամութիւնով եւրոպական որ և է մեծ պետութեան կողմից, որովհետեւ նաև ինքը Թիւրքիան չի կարող իւր բարեկամութիւնը յարաբեր կերպով շնորհել որ և է պետութեան. բայց և այնպէս նորա զօրքի կազմակերպութիւնը այնքան կատարելագործւած է, որ, կրիտական ընդհանրում միշտ ունենալով մի կամ մի քանի մեծ պետութիւնների չեզօք կամ զինւած պաշտպանութիւնը, կարողացել է խոշոր պետութեան դիրք պահպանել, միշտ սակայն դէպի անկումը թեքւած մնալով, հետեւապէս և պատերազմի աւելի յաճախ առիթներ ներկայացնելով։ Նւ արդարև, ներկայ դարում, մի կողմ թողած Նապոլէօնեան արշաւանքները, ոչ մի պետութիւն այնքան յաճախ արիւնհայեղ պատերազմների թաւերաբեմ չի ներկայացրել որքան Թիւրքիան (1806—12, 1828—29, 1853—56, 1877—78, 1897), չհաշւած բազմաթիւ ներքին ապստամբութիւնները։

Այս իրողութիւնը վերին աստիճանի կարևոր է, իմանալու համար թէ ինչ ակնկալութիւններ կարելի է ունենալ Խաղաղութեան կոնֆերանցիայից՝ պատերազմները սակաւացնելու կամ վե-

րացնելու խնդրի նկարմամբ: Պատերազմների համեմատապէս սակաւ լինելը եւրոպայի լուսաւորւած բայց մինչև արաբները սպառազինւած երկիրներում, և, չորս հակառակ, պատերազմների յաճախութիւնը Թիւրքիայի և որ և է այլ պետութեան միջև՝ պարզապէս ցոյց է տալիս, որ պատերազմների շէմն առնելու գաղափարը պիտի որոնել ներքին քաղաքականութեան մէջ. լաւ ներքին քաղաքականութիւնը ամենագորաւոր միջոցն է պատերազմների շէմն առնելու համար. և իսկական խաղաղասէր պետութիւնը նա է, որը ամեն ջանք գործ է շնուում՝ պետութիւնը իւր ներքին կարգերով թէ ներսում և թէ շրջում չարգել տալու:

Այդ իսկ հիման վրայ խաղաղութիւն պահպանելու ամեն մի լուրջ ծրագիր վերջ ի վերջոյ պիտի հետևեն մի կազմակերպութիւն, որին չի կարող վերաբերել լոկ խաղաղութիւն պահպանելու հոգսը, այլ և պետութիւնների ներքին ամենախոշոր խնդիրները, որոնց վաւ կարգադրումը սկզբնապատճառներ են ապագայ պատերազմների: Բայց հասկանալի է որ այժմեան կոնֆերենցիայից մի այդտեսակ արդիւնք բնաւ սպասելի չէ:

Որպէս տեսնք, չնայած որ եւրոպայի պետութիւնները աշխատում են ամեն ըրովէ պատրաստ լինել պատերազմի համար, բայց և այնպէս պատերազմները եւրոպական պետութիւնների միջև սակաւացել են, և այս վերջին մօտ 30 տարիներում Արևմտեան եւրոպայի պետութիւնների միջև պատերազմ տեղի չի ունեցել, չնայած որ այդքան տարիների ընթացքում կարգադրւել են հռչային մեծամեծ խնդիրներ: Առանց պատերազմների մրցող պետութիւնների մէջ՝ Աֆրիկայի խոշորագոյն մասը այդ տարիների ընթացքում բաժանւեց, լոկ փոխադարձ համաձայնութեամբ: Համաձայնութեամբ մեծ խնդիրներ կարգադրւելու ձևը այժմ անց են կացնում Ասիա (ինչպէս նորերս կայացած ուս-անգլիական համաձայնութիւնը):

Բայց սա հաստատ է, որ խաղաղ միջոցներով մեծ քաղաքական խնդիրներ կարգադրւելու հիմքը ներկայումս կազմում է այն փոխադարձ երկիւղը, որ ամեն պետութիւն ունի մրցակիցների պատերազմական ոյժից, և այն հանգամանքը, որ նոյն իսկ պատերազմի մէջ յաղթող հանդիսացողը վստահ չէ թէ պիտի վայելէ իւր յաղ-

Թուժիւնների պտուղները իւր ծրագրածի համաձայն: Այսպէս, օրինակ, ռուս-թրքական պատերազմը վերջացաւ ոչ Սան Ստեփանօյում, այլ Բերլինի վեհաժողովում:

Իրերի այս Դրութեան մէջ, ուր զինուորական ոյժը նաեւ խաղաղութիւնը ապահովցնող միջոց է ճանաչւած, ոչ-պատերազմներով խաղաղութեամբ խնդիրներ վճռելու ժամանակ ևս ձայնը պարկանում է ուժեղներին: Պահանջներ անելու և Դոցա յարգել պալու իրաւունքը պարկանում է նոցա, որոնք ոյժ ունին այդ պահանջներին, նաեւ պատերազմով բաւարարութիւն պալու, եթէ նոքա չը յարգեն հակառակորդներից կամ մրցակիցներից: Այդ իսկ պատճառով սովորաբար պաշտօնապէս պահանջներ չեն անում այն պետութիւնները, որոնք չպիտի կարողանան պատերազմով սպառնալ կամ առհասարակ զգալի փոփոխութիւն հասցնել հակառակորդին կամ մրցակցին: Ոչ մի մանր պետութիւն չի մտածում հողային սահանջներ անելու ի հաշիւ որ և է մեծ պետութեան: Բայց նոքա չեն էլ յաւակնում քաղաքական ազդեցութիւն ձեռք բերելու նաեւ Դուրսը՝ Աֆրիկայի և Ասիայի ոչ-եւրոպական պետութիւններին պարկանող երկիրներում: Նոքա աշխարհում են ամենաշատը՝ հնուց իրենց պարկանող կալաճները իրենց ձեռքում պահել, բայց ոչ ընդարձակել: Երովհետեւ հակառակ Դէպքում նոքա պիտի ընդհարեն կամ բնիկ զուցէ և ուժեղ տէրերի և կամ այն եւրոպական մեծ պետութեան հետ, որի շահերին հակառակ է այդ: Նոյն իսկ մեծ պետութիւններից զօրքով ամենից թույլը—Իտալիան—շատ էլ հաշիւ չի առնում միջազգային համաձայնութիւնների համար եւրոպական պետութիւնների հետ, որովհետեւ չունի այն պատերազմական ոյժը և մեծ ֆինանսական կարողութիւնը՝ հեռաւոր լայն ծրագիրներ իրագործելու համար: Օրինակ, նա իւր ապագայ կալաճն էր համարում Քոնստանտինոպոլի, որ սակայն գրաւեց Ֆրանսիան, որի Դէմ միայն անգոր ընդհանրութիւն պահեց, առանց կարենալու նորան որ և է կերպ փոխել: Նա կամեցաւ Արիստիան գրաւել, և սակայն միայն չարաչար կերպով պոժեց: և այժմ, երբ նա կամեցաւ հետեւել Գերմանիայի, Աուստրիայի և Անգլիայի օրինակին՝ Ձինաստանում մի նաւահանգիստ ձեռք բերելու և

այդ միջոցով չինսկան կայսրութեան մի գուցէ ընդարձակ հողի վրայ ապագայում իշխանական իրաւունքներ ձեռք բերելու համար, — նա մերժում արացաւ չինաց կառավարութիւնից, բայց և տաճարներում է գէնքի շինելու իւր ուզածը կատարելու համար։ Եւ Անգլիան, որի հետ համաձայնութեամբ նա կարող էր առանց արիւն թափելու՝ խաղաղութեամբ Ձինաստանից բաւարարութիւն տրանալ, ոչ մի քայլ չարեց Իտալիայի հետ համաձայնութեան մէջ մտնելու, մինչդեռ նոյն Անգլիան այդ շէպքից յետոյ համաձայնութիւն կայացրեց Ռուսիայի հետ՝ Ձինաստանում իրենց ունենալիք ազդեցութեան շրջանները որոշելու համար։ որովհետեւ Ռուսիան կարողութիւն ունի՝ Անգլիայի հակառակ՝ Ձինաստանի որոշ մասում իւր գէնքի ոյժով ազդեցութիւն տարածելու, որպէս և Անգլիան կարողութիւն ունի՝ Ռուսիայի հակառակ՝ Ձինաստանի մի այլ շրջանում իւր գէնքի ոյժով ազդեցութիւն տարածելու։ Ուրեմն, մտածում են Ռուսիան և Անգլիան, իրար հետ խաղաղութեամբ համաձայնութիւն կայացնելով մենք ոչինչ չենք կորցնում, բայց միայն ցանկացածներս ձեռք ենք բերում առանց պատերազմի (Ռուսիայի և Անգլիայի միջև), եւթադրելով որ Ձինաստանը ինքը չպիտի պատերազմի ոչ Ռուսիայի և ոչ Անգլիայի շէմ։ Մինչդեռ Անգլիան շատ չի տեսնում Ձինաստանի նկատմամբ Իտալիայի հետ համաձայնութիւն կայացնելու, որովհետեւ Անգլիան կարօտ չէ Իտալիայի սլաշտպանութեան՝ Ձինաստանում և այլուր ազդեցութիւն ձեռք բերելու համար, հետեւապէս այդպիսի համաձայնութիւնից միմիայն Իտալիան կարող էր օգտուել։ Մինչդեռ շահը պիտի փոխադարձ լինէր երկու շահնակցող ազգերի համար։ Իտալիան արիւղած է լռել, բայց և ոչինչ չըշահել։

Ահա այսպիսով մենք տեսնում ենք, որ խաղաղութեան քաղաքականութիւնով մեծ խնդիրներ յարթելը ոչ մի կերպ չի փոխում իրաւունքի հարցը, որովհետեւ նաեւ խաղաղութեամբ խնդիրներ վճռելիս՝ վարագոյցի երկը պսպղող սէիններն են որ խօսում են։

Այս պարագան սերտ կամ ունի միջնորդ դատարանի խնդրի հետ, որը մտնում է Հաագի կոնֆերենցիայի ծրագրի մէջ։ Միջ-

նորդ Դադարան» անուն կրող զանազան կազմակերպութիւններ կա-
րելի է սպեշճել: Միջնորդ Դադարան, բաշկացած որոշ թւով ան-
ձերից, որոնք ընտրւած կը լինեն պետութիւններից որոշ ժամանա-
կամիջոցով, հետեապէս մի Դադարան՝ մինչև այսօրն ու այսօրն
տարի անտոյտիս ուրեմն և անկախ անդամներով, որոնք ձայների
առաւելութեամբ պիտի իրենց վճիռը տան միջազգային վիճելի
խնդիրների մասին և արգելեն որ և է պատերազմ,—ահա ինչը
կը լինէր մի կատարելապէս նոր քաղաքական հաստատութիւն, որով-
հետեւ Դորանով կը փոխէր իրաւունքի հիմքը. Դադարանը կը վըճ-
ռէր խնդիրը բոլորովին անկախ այն բանից թէ վիճողները ինչ
պատերազմական ոյժ են ներկայացնում, նման քաղաքացիական Դա-
դարաններին, որոնք ունեւորի և չունեւորի միջև խորութիւն չեն
շնուում:

Բայց եթէ այդ տեսակ միջնորդ Դադարան կարելի լինէր հիմ-
նել,—աւելորդ պիտի լինէր պատերազմի համար զօրք պահելը: Եւ
կը վերացնէր ոյժը քաղաքական գործօնների շարքից:

Այդ արդէն չափազանց բարդ բան է և շօշափում է ամենա-
խոշոր պատմական-կուլտուրական խնդիրները, որովհետեւ մի ազգի
քաղաքական ոյժը մի անգամ առ միշտ տրւած բան չէ, այլ ար-
դիւնք է պատմական-կուլտուրական և նոյն իսկ ցեղաբանական-մար-
դաբանական զարգացման, և այդպէս լինելով՝ նա ենթակայ է էւո-
լիւցիայի օրէնքների. այնպէս որ Պատմական Իրաւունքը օրէնսդրա-
կան որոշումների վրայ չէ հիմնւում և իրաւագէտների ձեռնհա-
սութեան չի վերաբերում: Բարբարոս Գոթերը նւաճեցին Եւրոպան,
խորտակելով Հռոմի կայսերութիւնը, և Դորանից ծնեց ներկայիս
Եւրոպան: Դա պատմական պրոցէս էր: Եւպոնիան նոր ժամանակ-
ներում չալձակեց վիթխարի Զինաստանի վրայ և մերկացրեց չի-
նական անգորութիւնը, մինչդեռ Դորանից քիչ ժամանակ առաջ
մի ճանաչւած քաղաքագէտ Եւրոպան չինական ահռելի ոյժի առջև
դրած էր նկարագրում:

Որ այս ու նման պատմական պրոցէսները իրաւագիտական
ըմբռնումների շրջանակների մէջ պարփակւել չեն կարող,—այդ ինքն
ըստ ինքեան հասկանալի է: Դորանով արդէն միաժամանակ առած
է, որ նաև միջնորդ Դադարանները անգոր պիտի լինեն պատմական

մեծ պրոցեսներին ուղղութիւն տալու, հետեւապէս և անկարող պիտի լինեն պատմական պրոցեսների համար իրաւունքի նոր հիմքեր ստեղծելու: Իսկ եթէ այդպէս է, միջնորդ շարարանները երբեք չեն կարող աւելորդ շարձել ինքնապաշտպանութեան նիւթական միջոցը— զէնքը: Մնում է որ միջնորդ շարարանը լինի մի միջազգային հաստատութիւն, որը կոչուին կ'ունենայ վճռելու միջազգային քաղաքական խնդիրներ՝ զոյուծին ունեցող դաշինքների (ուրեմն պրէն նախորդ իրաւական հիմունքների) հիման վրայ և կամ ոչ պարտաւորիչ կարծիքներ յայտնէ այս ու այն դէպքերում, և կամ թէթեւացիէ ամեն բանակցութիւնների պետութիւնների միջև:

Բայց եթէ յաջողւի միջնորդ շարարան հիմնել գէթ այդ ձեւն հաստատութեամբ — այդ էլ մի քայլ առաջ անել կը նշանակէր՝ միջազգային յարաբերութիւնները հեշտացնելու մտքով: Իսկ իբրեւ միջոց պատերազմներ իսպառ վերացնելու, շորան մենք չենք հաւատում, որովհետեւ շարուս պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ տեսակ խնդիրների համար թէև պետութիւնները իրար դէմ լարուած զրգուում են, բայց գործը շոցա պատճառով պատերազմի չի հասնում: Եւրոպական պատերազմները կապած են լինում շատ աւելի բարձր նպատակների և ոչ թէ այնպիսի խնդիրների հետ, որոնց մի միջնորդ շարարան կարող լինէր յարթել: Քրիմի պատերազմի իսկական պատճառը այն անհամապատասխանութիւնն էր, որ կար Աուստրիա արտաքին ձգտումների և Ռուսիայի ներքին յետամնացութեան մէջ՝ նոյն իսկ գործի կազմակերպութեան տեսակէտից: Իրաւօ-աւստրիական պատերազմների նպատակը՝ միացած Խալիան գլուխ բերելն էր. առանց պոլսական աւստրիական և Ֆրանս-գերմանական պատերազմների չէր գլուխ գալ Գերմանիայի միութիւնը: Եւ եթէ մի միջնորդ շարարան իւր ժամանակին վճռելու լինէր ընդդէմ Սարդինիայի թագաւորութեան և ընդդէմ Պրուսիայի ձգտումների— շոքա բնականաբար կը սկսէին աշխատել միջնորդ շարարանը քայքայելու. և այնպիսի պետական գործիչներ ինչպէս Կաուր և Բիսմարկ—անկասկած կը հասնէին այդ նպատակին, էլ չխօսած Կեսարների ու Նապոլեոնների մասին:

Իսկ եթէ միջնորդ շարարանը չպիտի գայ միջազգային իրաւունքի նոր հիմքեր ստեղծելու, այլ պիտի գայ միայն միջազ-

գալին յարաբերութիւնները շիւրացնելու, փոխադրելով այժմ կարարեող քաղաքական համաձայնութիւնները և այն միջնորդ շահաւորութիւնը, որի օգնութեանը մի-երկու տասնեակ տարիներից ի վեր շիմել են այլ և այլ պետութիւններ (ինքը Բիւսթարիլը այդպիսի միջոցի շիմեց Կարոլինեան կղզիների խնդրի համար) — ապա ուրեմն պետութիւնները կը շարունակեն պապաճառոր զինաւորումը ճանաչել որպէս անհրաժեշտութիւն թէ իրենց անխախտութեան և թէ քաղաքական միջադգային պահանջները պաշտպանելու համար։ Առաջարկները՝ զինաւորումները սահմանափակելը և պարտաւորել ապագան ու այնքան մարդուց աւելի չպահել — մեզ թւում են անիրագործելի։ Ներկայիս զինակակցութիւնների պայմանը դորա կարարելագէտ հակառակն է. նիզակակցութիւններ սահմանելիս, ճիշդ հակառակը, պայման են դնում որ նիզակակց պետութիւնները իրաւունք չունենան ամեն մէկը որոշ կոնֆինգէնտից պակաս ունենալու. որովհետեւ ձեռնարկ է մի պետութիւն իբր նիզակակց ունենալ, որը չափի կարողանայ հարկաւոր դադրում նախարեսնաւծի չափով օգնութեան գալ իւր բարեկամ պետութեան։ Ահա ինչու, ի միջի այլ պատճառների, հզօր պետութիւնները միշտ կ'ընդդիմադրեն զինաւորումը միջազգային շահնադրութիւններով սահմանափակելու կամ նախորոշելու առաջարկներին։

Ներկայ յօդաւորի սկզբում մենք յայտնեցինք որ Եւրոպայի հասարակական կարծիքը մեծ պետութիւններում սկեպտիկաբար է վերաբերում դէպի Հաագի կոնֆերենցիան — նորա ունենալիք անմիջական հետեւանքների տեսակէտից։ Կարծում ենք որ այդ սկեպտիկականութեան զլխաւոր հիմքերը նշանակեցինք այս յօդաւորում։ Կարող ենք աւելցնել, որ նոյն այս ամիսներս, խաղաղութեան կոնֆերենցիային պարտասուելու ամենամօլ ժամանակներս՝ մի առանձին եռանդ ցոյց տուեց ամենուրեք՝ զօրքերը աւելացնելու համար։

Չնայած այս ամենին, Հաագի խաղաղութեան կոնֆերենցիան մի նշանակալից պատմական երևոյթ է ներկայացնում, շնորհիւ արդէն այն հանգամանքի, որ նորա նախաձեռնողը աշխարհքիս մի ամենահզօր պետութիւնն է — Ռուսիան։ Եթէ Հաագի կոնֆերեն-

ցիւղում լուծումն չի ստանալու պատերազմի և խաղաղութեան
խնդիրը, բայց արդէն իսկ մտքերի փոխանակութիւնը և այն յոյսը
որ կայ պարբերական շարձնելու այդ խնդրի համար համաժողով-
ները—մեծ զարկ կ'տան առանձին խնդիրների ուսումնասիրութեան
և, որ զլիաւորն է, կ'աջակցի պետութիւնների փոխադարձ յարա-
բերութիւններին աւելի խաղաղասիրական բնաւորութիւն ստանա-
լուն, առիթ ու միջոց կ'ծառայի թիւրիմացութիւններ վերացնե-
լու, թերեւ շրջիչ կ'լինի յետամնաց պետութիւնների համար՝ բարե-
նորոգումների ձեռնարկելու իւր հէնց այդ շերտը խաղաղութեան
կոնֆերենցիան նշանակութիւնը կ'ստանայ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ